տոսի պատահածներուն մարգարէութեանց իրականացումը բացատրելէ վերջ, «իբրև մեկնեցան ի գեօղն՝ յոր երթային, և նա պատճառէր հեռագոյն ևս ուրեք երթալ։ Եւ բռնադատեցին զնա և ասեն. առ մեզ ա-գիր, զի ընդ երեկս է, և տարաժամեալ է օրս, և եմուտ ագանել ընդ նոսա։ Եւ եղև ի բազմիլն նորա ընդ նոսա, առեալ զհացն՝ օրհնեաց, երեկ և ետ նոցա։ Եւ նոցա բացան աչք և ծանեան զնա, և նա եղև ի նոցանէ աներևոյթ» (28–31)։

Գ–Դ դար, եկեղեցական մատենագիրները Որոգինէս, յետոյ Եւսեբիոս Կեսարացի մէկ Եմմաուուս միայն գիտէին, դաշտի Մակաբայեցւոց քաղաքը՝ որ ունէր Նիկոպոլիս տիտղոսը, և կարծեցին թէ ան էր Աւետարանի Եմմաուուսը։ Բայց դաշտի Եմմաուուս-Նիկոպոլիսը հեռու էր Երուսաղէմէն ոչ թէ 60 այլ 160 ասպարէզ։ Երևութական սխալը անհետացնելու համար սրբագրեցին նուիրական բնագիրը իրենց թարգմանութեանց ընդօրինակութեանց մէջ, 60 ասպարէզը փոխելով 160ի։ Յերոնիմոս թարգմանելով Եւսեբիոսի Տեղագրութիւնը Ս. Ղուկասու Եմմաուուսը ցոյց կուտայ դաշտի Նիկոպոլսոյ մէջ, բայց Վուլկաթայի մէջ 60 ասպարէզի թիւը անփոփոխ կը թողու, ինչպէս որ գտած էր հին ձեռագիրներուն մէջ։ Այս նշանաւոր մատենագիրները չեն նշմարած թէ երկու աշակերտները Երուսաղէմէն Եմմաուուս 30 քմ. ճամբորդութիւն մը կատարելէ յետոյ, պիտի չկրնային միևնոյն օրը նոյնչափ ևս ճամբորդել և հասնիլ Երուսաղէմ ժամը իններին, մեկնելով Եմմաուուսէն՝ մինչ արդէն օրը տարաժամած էր։ Այսպէս գիտունները կը տեսնէին ձախող սրբագրութիւն մը 160 ասպարէզին։

Այսու ամենայնիւ, Տատիանոս (Բ. դար), Օգոս-